# Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ ՎԵՀԱԶՆ

## ՏԱՏԵԱՆ ԱԶԳԱԽՆԱՄ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԷՅԻ

Մինչեւ ցե՞րբ Աստուած անմահ Հայր անմահից և մահացուաց
Աչք 'ի յարտօսր, սիրտ 'ի կսկիծ, ձեռք դողդոջուն 'ի վերամբարձ,
Կոր 'ի գլուխ կոծեսցուք մեք զանձանց զմահ հայրախնամ:
Չառ միթէ՞ համարեցեր զայս վեհ որեար ազգասէր՝
Ի շնորհելին ամբողջ ազգիս, զբարերարն Հայ մանկութն.
Զի 'ի կեանս իւր առաքինի՝ որ կարի յոյժ սուղ եղեւ,
Զհայրենեացն խորհէր զօգուտ՝ և՞ թշուառաց լինէր օգնան.
Մինչ զի զանձին մոռացեալ շահ անզուգ սիրով որ առ Ազգն,
Որբոց 'ւայրեաց խնդրէ պարէն ընդ հովանեաւ փրկչեան վանուց.
Այն ինչ Սուլթանն Օգոստափառ ԱԲՏԻՒԼ—ՄԷՃԻՏ խանն առ ձայնէ
Թէ «Սիրելիդ իմ Յովհաննէս խնդրեա՛ յինէն և տաց քեզ»:
Սա ազգասէր պերճն Յովհաննէս վեհ շառաւիղ Տատեան զարմին,
Տարաւ փոյթ ջան զարթուցանել 'ի սիրտ Հայոց սէր ուսման,
Ինքն անձամբ հանդիսացեալ օրինակ մեզ միշտ կենդանի:
Բարուքն հեզ, վարուք խոնարհ, սրտիւ մաքուր, միօք ուշիմ,
Եւ Մեկենաս առատ տրօք առ քրտնաթոր մատենագիրս.
Զի առ յօգուտ՝ որոց վառին 'ի սէր ուսման ցյաւիտեան
Զընտիր ընտիր 'ի դպրութեանց լուսաւորիչ կոյր մտաց
Այք իրաւամբ կրեն զանուն անզուգական Ազգասիրիս,
Ձօնեաց նուէր իւր Ազգին՝ յանձնեալ անմահ վեհ մահույն:
Թողում թուել մանրամասն բիւր երախտիս հոգւոյն ազնիւ,
Ընծանօթ իսկ գլխովին մինչեւ որոց ընձեռեցան,
Թէ յումմէ է այս մեծ շնորհ 'ի նեղ պահու ժամանեալ,
Որով յաստիս կանգնեաց անմահ կոթող՝ 'ի սիրտ համայնից.
Եւ յաւիտեանս դարուց 'ի դարս կացցէ անմահ անմոռաց,
Թէպէտ 'ի մէնջ մեկնեցաւ արդ թողեալ զմարմին հողաչէն:
Ո՛ Տէր խնամող՝ որ կոչեցեր զայս մեծաշուք ընտիրն արանց
Փոխեալ 'ի կեանս անմահ անվախճան յիւր մահացու բնութենէն,
Առ քեզ դիմեմք ջերմ մաղթանօք արտասուալից հառաչանօք,
Հաճեա՛ լինել դու մխիթար համայն Ազգիս տոհմին Հայկեան,
Եւ պարգեւել կար, զօրութիւն, կեանս երկարս պայազատացն
Ազնուաշուք Հանգուցելոյս Տատեան զարմին Ճոխապանծ,
Ազնիւ գձիրս և վեհ հոգի հօրն իւրեանց Ազգախնամ,
Զի հօրանյն հանդիսացեալ բուժեսցեն զայս խոց ահագին:

Գաբրիէլ Այրապետեան Խարբերդցի
Աշ. Ժառ. Վարժարանի.

digitised by A.R.A.R.@